




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

331.88

7-19

Պրովետորներ բոլոր յերկրների, միացե՛ք

ԱՐԻԻՆԱԿԱՊՄԹԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼԶՈՒԹՅՈՒՆ

№ 1 - ԲԱՆՎՈՐ ԱԳԻՏԱՏՈՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 1

ՊԱՅՔԱՐ ՈՊՊՈՐՏՈՒՆԻՋՄԻ ԴԵՄ
ԼԵՆԻՆՅԱՆ ՊՐՈՖԳԾԻ ՀԱՄԱՐ

Խմբագրեց Ա. ԲԱԲԱՍՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՐԻՔՆԱԿԱՊՄԹԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼԶՈՒԹՅԱՆ
(Նախնիկն կառուցողներ)

ՅԵՐԵՎԱՆ—1931

ՊԵՏՅՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 4926
ԳԼԱՎԼԻՏ 6782 (Բ)
ՏԻՐԱԺ 600

331.88

7-19

ար

15 JAN 2010

ՊԱՅԳԱՐ ՈՊՈՐՏՈՒՆԻԶՄԻ ԴԵՄ — ԼԵՆԻՆՅԱՆ ՊՐՈՑԳԾԻ ՀԱՄԱՐ

1930 թվականը խորհրդային պրոֆչարթման համար հանդիսացավ հետագա մի շրջան իրականացնելու այն խնդիրները, վերոնր սոցչինարարության վերականգնման շրջանում դրված են պրոֆմիությունների առաջ։ Սոցիալիստական հարձակման շրջանը, վերն անխուսափելիորեն կապված է դասակարգային պայքարի սրման հետ, պահանջում է, ինչպես վերոշել է կուսակցության 16-րդ համագումարը՝ «առաջավոր ոլորետաբխառի տասնյակ և հարյուր հաղարավոր մասսաների ավելի ակտիվ և անմիջական մասնակցություն տնտեսական շինարարության ղեկավարման գործում և բանվոր դասակարգի ու չքավոր կոլտնտ. գյուղացիների միլիոնավոր մասսաների ներգրավումը սոցչինարարության գործնական աշխատանքներում»։

Պրոֆմիությունների, վերպես լույն մասսայական պրոլետարական կադմակերպությունների վրա, առաջին հերթին խնդիր է դրվում մոբիլիզացիայի յենթարկել ու կադմակերպել մասսաների սոցչինարարության գործի շուրջը»։

1408
35601

Սոցչինարարության վերակառուցման շրջանը պահանջում է պրոֆիտիւթեանական աշխատանքների վճռական վերակառուցում:

Պրոֆիտիւթյունական հիմնական խնդիրն է ամենաակտիվ ու անմիջական մասնակցութիւն ունենալով տնտեսական շինարարության աշխատանքներում, իրականացնել «յերեսներս դեպի արտադրութիւն» լողունը: Սակայն, այս խնդիրը պրոֆչարթման հին, ոպորտունիստական զեկաւարության ուժերից դուրս եր, նա դեմ էր աշխատանքի վերակառուցմանը, բողոքում էին տրեղյունիստական, ոպորտունիստական տարրերը, վորոնք բուն էին դրել պրոֆիտիւթյուններում: Սրանց հարցադրումները հիմնականում տարբերվում էին լենինյան թեորիայից ու պրոֆչարթման պրակտիկայից: Այդ առանձնապէս պարզ արտահայտութիւն դետալ պրոֆչարթման նախկին ոպորտունիստական զեկաւարեների «թեորետիկական» յեղափոխումներում: Պրոֆիտիւթյունների 6-րդ համագումարի հաշվետւության նախաբանում ընկ. Տոմսկին այսպէս ձեւակերպեց պրոֆխնդիրները սոցիալիստական շինարարության ու պրոդուտարական դեկտատուրայի շրջանի համար: «Պրոֆիտիւթյունների առաջ, անկախ ժամանակից, անկախ ընդհանուր խնդրի ուղղութիւնից տվյալ մոմենտում, շարունակ ծառացած է մեկ հիմնական խնդիր. այդ խնդիրը բնորոշվում է հենց պրոֆիտիւթյունների դերով ու նշանակութեամբ, այդ մի խնդիր է, վորը յենթակա յե բաղմակողմանի քննարկման և անհրաժեշտ է տանել ամենորայ անընդհատ աշխատանք՝ բարձրացնելու ու բարելավելու համար պրոֆիտիւթյուններում

ընդգրկված մասսաների նյութական ու հոգեկան մակարդակը»:

Հետ նահանջելով պրոֆչարթման լենինյան թեորիայից, ՀԱՄԿԽ-ի հին, ոպորտունիստական զեկաւարութիւնը «պրոֆիտիւթեանական բարդ ու հիմնական խնդիրներում վերցրեց հակալենինյան աջ ոպորտունիստական դիրքավորումը» (16-րդ համագումարի վորտւմներից):

Այս հանգամանքը դալիս է ասելու, վոր վորոշ շրջանում պրոֆիտիւթեանական դործունեյութիւնը սահմանափակվում էր ցեխային շահերի նեղ շրջանակով, այն ժամանակ, յերր անհրաժեշտ էր մոթիլիզացիայի յենթարկել պրոլետարիատի լայն մասսաներին արագացնելու սոցչինարարության տեմպերը և պայքարելու այդ ոննախընթաց տեմպերի կապակցութեամբ ծնունդ առնող դեվարութիւնների դեմ:

Ինչպէս ներկուսակցական աջ թեքման, այնպէս էլ պրոֆչարթման աջերի հիմնական չարիքը նրանումն էր կայանում, վոր նրանք հնարավոր չէին համարում այդ դեվարութիւնների հաղթահարումը Ֆասսաների վորդեվորութիւնը կազմակերպելու միջոցով:

Չպատկերացնելով ներկա վերակառուցման յուրահատկութիւնները, նրանք չէին կարող պատկերացնել և այն, վոր ժամանակակից սոցչինարարության շրջանը հենց այն շրջանն է, վորի մասին ընկ. Լենինն ասում էր պրոֆիտիւթյունների 2-րդ համագումարում «Վորքան լայնածավալ և խորն է լինում հեղաշրջումը, այնքան բաղմամարդ պետք է լինի այն մարդկանց թիվը, վորոնք կատաշում են այդ հեղաշրջումը, վորոնք հան-

դիտանում են այդ հեղաշրջման ստեղծագործողը, բառիս լայն խմատով» :

Մոռանալով այն, վոր բայլչելիկյան հարձակման համար անհրաժեշտ է «մորելիզացիայի յենթարկել մասսայի ստեղծագործական ինքնուրույնությունը ընդգեծ մեր հիմնարկությունների ու կազմակերպությունների բյուրոկրատիզմի, վորը թույլ էի տալիս ոգտագործել մեր հակայական ուղեբեկները մասսաների աշխատանքի արտադրողականության բարձրացման և սոցիալիստական շինարարության ծավալման համար մըրցություն ու աշխատանքային վերելք կազմակերպելով» (Մտալին 16-րդ համագումարի հաշվետվությունից) : Այլ սպորտուհիտաները կոչ եյին անում խիստ զգուշությամբ մոտենալ ինքնաքննադատության ծավալմանը և այդպիսով արգելք եյին հանդիսանում մասսայի ակտիվությանը :

Պրոֆչարժման լենինյան թեորիան ասում է մեզ, վոր կուսակցության համար միությունները հանդիսանում են «մի շաղկապ ստաջանոր մասսաների հետ, վոր կուսակցության առաջ ինդիլ է դրված ել ավելի և նոր ձևով դաստիարակել պրոֆմիություններին և դեկավարել նրանց» : Լենինն ընդգծում էր, վոր անխուսափելի կլինի մեր սոցշինարություն կառավարող ման, յեթե սխալ է կառուցված կամ սխալ է աշխատում կուսակցությունից դեպի մասսան զնացող չարժուար փոխորդությունը» : Այդ պահանջում է մանավանդ ներկա շրջանում, վոր կուսակցությունն ուժեղ դեկավարություն ունենա պրոֆմիությունների նկատմամբ :

Յերբ կուսակցության կենտրոնական կոմիտեն, ի-

րադործելով լենինյան սկզբունքները, ամենայն մճռականությամբ օկսեց ուղղել աջ ուղորտունիւսաների սրխալները, վերջիններս վորոշեցին պրոֆմիությունը հակադրել կուսակցությանը, նրանք դիմադրություն եյին ցույց տալիս կուսակցության կենտկոմին պրոֆաշխատանքները վերականգնելու ինդիլում, վորը կատարվում էր այն ուղղությամբ, ինչ պահանջում եյին սոց. վերակառուցման շրջանը և բայլչելիկյան հարձակման ծավալումը կապիտալիզմի միացորդների դեմ :

Լենինյան կկ-ի դեկավարությամբ համառ և վըճռական պայքարից հետո, հաջողվեց ջախջախել աջ ուղորտունիւսաներին : Պրոֆմիությունները կուսակցության դեկավարությամբ և «յերեններս դեպի արտադրություն» լողունգով անցան իրենց աշխատանքի վերականգնմանը : Գուցե այդ վերականգնումը վոչ բոլոր ողակներում է կատարվում այն արադությամբ, ինչպիսին պահանջում է մեր հակայական շինարարությունը, սակայն անկասկած, 1930 թ. վերջերում պրոֆմիությունները բավականին ընդհուպ մոտեցան այս գործին, կազմակերպելով բանվորական միլիոնավոր մասսաներին սոցիալիզմի կառուցման պայքարի համար :

«Յերեններս դեպի արտադրություն» և դեպի սոցմըցման զարգացումը.—պրոֆաշխատանքի վերահանուցման հիմնական պայմանն է սոցմըցման զարգացումը : Սոցմըցումն արդեն դարձել է սոցիալիստական վերականգնման համար մղվող պայքարի հիմնական շարժիչ ուժը :

Պրոֆմիությունների կարեւորագույն և հիմնական

խնդիրները կայանում են նրանում, վոր նրանք կարողա-
նային գլխավորել ու վարդապետել բանվորական լայն
մասսաների սոցմրցման ու հարվածայնության շարժու-
մը և սոցմրցումը փոխադրել ավելի բարձր աստիճանի:
Դեպի արտադրություն չըջադարձ կատարել, նշանա-
կում են պրոֆմիությունները կոնկրետ ղեկավարության
տակ վերցնել բանվոր դասակարգի շտեմնում վերելքի
սոցմրցումն ու հարվածայնությունը: Այդ չըջադարձը
սրահանջում են, վոր պրոֆմիությունները ամենորոյտ
աշխատանքով մորելիցացիայի յենթարկին մասսաներին
արգֆինսկանները կատարման և վողջ ժողովրդական
տնտեսության ինդուստրացման ըսկզբիկյան տեղ-
պերի իրագործման խնդիրների շարջը:

Սոցմրցման զարգացումը 1930 թ., հանդիսացավ
առաջնութայ մի քայլ իրագործելու Լենինի այն միտքը,
վոր միլիոնավոր մասսաներ պետք են դառնան հեղաշրջ-
ման տվյալ դեպքում վերակառուցման չըջանի ստեղ-
ծագործողը:

Սոցմրցումն սկսեց զարգանալ չինարարության առ-
նախնութայ լարված տեմպերի համար մղվող պայքարի
պայմաններում, պայքար, վոր սրահանջում են ամբողջ
պրոլետարիատի կամքի և ուժի մորելիցացիան:

Մրան զուգընթաց անհրաժեշտ են հարվածել ժողո-
վրդական տնտեսությանն սպառնացող յերեմուլթները,
ինչպիսին են՝ գործալքումները և աշխույժիկայինայի
անկումը, աշխատանքի արտադրողական անկման այդ
հատկանիշները: Սոցմրցումը, վորն իր հերթին առաջ
բերեց հարվածային բրիգադների հզոր շարժում, վըճ-
ռական պայքար հայտաբերեց գործալքումների, դիմ-

ցիպլինայի անկման, աշխատանքի վատ վորակի ու սո-
կոդականության դեմ և վճռական ազդեցություն ունե-
ցավ հեղամյակի առաջին յերկու տարիները պլանների
կատարման գործում: Բանվորական մասսաների հզոր
վերելքը պակաս դեր չխաղաց նաև այն բանում, վոր
մեր պետական արդյունաբերությունը միամսյակի առա-
ջին յերկու տարիները ընթացքում տվեց 30,5 միլիարդ-
ուրբու արտադրանք, հեղամյա պլանով նախատես-
ված 23,3 միլիարդ ուրբու դեմաց, իսկ ծանր ար-
դյունաբերությունը—13,3 միլիարդ ուրբու, 12,5 մի-
լիարդի դեմաց:

Սոցմրցման հետևանքով ծամանակից շուտ ավար-
տվեցին միամյակով նախատեսված խոշոր չինարարու-
թյունները՝ Թուրքսիբը, Ստալինգրադի տրակտորա-
յին գործարանը, Ռաստովի Սելմաչը, արտառահման-
յան տեմպերը գերազանցող տեմպերով կառուցվում են
Դնեպրստրոյը, Խարկովի տրակտորային գործարանը և
այլն:

Սոցմրցման և հարվածայնության շարժումն իր
ծավալման ընթացքում դեմ առավ անչուշտ դասակար-
դային անհարազատ տարրերի տրամդրությունների
արտահայտիչը հանդիսացողների կատարել դիմադրու-
թյան: Զանազան ճանապարհներով մեր արդյունաբե-
րության մեջ խցկված յեթակուլակային տարրերը հար-
վածային շարժման մեջ շատ լավ ելին տեսնում պոկո-
ղական տրամադրությունների կատարել թշնամուն,
դրա համար ել խիստ ատելություն ելին ցույց տալիս
նրա հանդեպ: Սոցմրցումն ու հարվածայնությունը
վճռական հարված ելին հասցնում այն տիպի բանվոր-

ներին, վորոնց մասին Լենինն ասում եր, թե նրանք բանվորական պետութեան վրա նախում են զբիւլ և վատ աշխատանք տալու, բայց նրանից չառ պոկելու» տեսանկյան տակ:

Բաժական և մատնանշել մի քանի պրոպագանդիստները: Ձերթինակու անվան գործարանում հարվածային բրիգադի մեջ խցկված յերկու յենթակուլակներ վորձեք կատարեցին քայքայել բրիգադի աշխատանքը: Արտեմիսիում յերկու սոցմրցման մեջ դանիսդ բրիգադներ իրարից թագցնում էյին գործիքները: Բրյանսկի գործարանում սոսկալի ծեծի յենթարկեցին մի հարվածայինի, վորովհետե նա մատնանշել եր քառուժի պահասը, արտադրական պրոցեսներից մեկում: Թե ինչպես պրոֆմիությունական առանձին ողակները մնացել էյին հետամնաց խմբակների սրչում և ծառայում էյին դատակարգային թշնամուն, այդ սպացուցելու համար կարելի յեր բերել մի շարք դեպքեր. այսպես որինակ՝ Վոլադարսկու անվան գործարանում գործարկումն աշխատանքից արձակեց հարվածային բրիգադին. Ստալինի անվան գործարանում, պրոֆմիությունն արձակեց յերկտասարդներից բաղկացած 2 հարվածային բրիգադա այն պատճառարանությամբ, թե մեծահասակները հայտարարություն են տվել այս մասին, վոր յերկտասարդները նրանց հարածում ու քոյմ են:

Այնպիսի դեպքից պետք է նշել, վոր սոցմրցումն ու հարվածայնությունը պետք է վերջ դնեն պրոֆմիութենական ապարտի այն դանդաղաշարությանը, վորը մնացել է օպորտունիստական ղեկավարությունից:

Այսպիսի փաստեր, յերբ գործարկումը բանվորների անունից սոցպայմանելը և կնքում ադմինիստրացիայի հետ առանց բանվորների գիտության, դեպքեր, յերբ հարվածային բրիգադում ադմինիստրացիան նշանակում և, առանց հարվածայինների համաձայնության—այս փաստերը դալիս են ասելու, վոր չառ դեպքում գեոկա չեն հասկացել սոցմրցման նշանակութունը:

Կամպանիոն մոտեցումը սոցմրցման հանդեպ և օրենսդրյա հոգածու ուղադրության բացակայությունը գեո մինչեվ որս մնում են վորպես պրոֆաշխատանքների հիմնական բացերից մեկը և բացասական հետեւանքների յեն հանգել տալիս:

1930 թ. լենինյան հարվածայինների կոչը բանվորական մասնաների հակաշահան շարժում առաջացրեց, տվեց միլիոնից ավել նոր հարվածայիններ: Բայց ադմկալի ադիտացիոն աշխատանքներից և ադմկալի հանաձեւներից ու վոդչույներից հետո, առանձին պրոֆմարմինները անշնորհություն ցույց տվին բրիգադների ղեկավարության գործում և վերջում մի շարք ձեռնարկներում նոր բրիգադները կազմալուծվեցին, տեղի հարվածայինների թիվը պակասեց և սոցմրցումը դեպի անկումը դնաց:

Սոցմրցման ու հարվածայնության դարգացմանը պակաս չափով չի խանգարում նաև այն հանգամանքը, վոր անտեսավարներն անընդունակություն են ցույց տալիս բանվոր դասակարգի բուն թափով դարգացող ակտիվությանն ընդառաջ գնալու գործում, պլանները ցեխերին չեն հասցնում, սոցմրցման և նրա եֆֆեկտիվացման հաշվառում չեն կազմակերպում:

Սոցմբրցման հետագա ղեկավարութեան խնդրում անհրաժեշտ է պայքարել կոնկրետ ու վորոշ տվյալների համար այս հիմնավորմամբ—հնարավոր սոցմբրցումն ու հարվածայնութիւնը փոխադրել բարձր աստիճանի: Սոցմբրցման ասպարիզում, միութենական մարմինների խոշոր բացերից մեկը պետք է համարել հարվածային բրիգադների աշխատանքների ճշգրիտ հաշվառման բացակայութիւնը: Մինչեւ որս, ղեռ չեն կարողացել դուրս տալ առանձին բրիգադների նվաճումները, վորս պետք այդ հիման վրա սոցմբրցումը կարողանա ավելի ծավալվել:

Անհրաժեշտ է մատնանշել նաև այն, վոր մի չարք պրոֆմիութենական և տնտեսավարական որդանները թերազնահատում են պարզեատրման նշանակութիւնը սոցմբրցման զարգացման գործում: Այս ասպարիզում մի չարք տեղերում դրութիւնը միութնական չէ, ինչպէս այդ հաստատում էր իր գեկուցման մեջ ինկ. Շվիլինիկը կուսակցութեան 16-րդ համագումարում:

Նիւթեգործակի Ավտոստրոյում հարվածայիններին պարզեվատրեցին... յուսանկարներով: Մի չարք տեղերում պարզեվատրման ֆոնդը չի ծախսվում: Մինչդեռ պարզեվատրման նպատակն է—աջակցել և խրախուսել լաւագույն հարվածայիններին, բրիգադներին և ցիխներին սոցմբրցման հետագա վերելքի համար:

Չնայած այս բոլոր բացերին, սոցմբրցման ու հարվածայնութեան ֆրոնտը քանի գնում, յայտնում է, և ներգրավում է հարյուր հազարավոր նորանոր բանվորներ: Մասաների այդ ինքնագործունեութեան վե-

րելքը թերադրում և առաջադրում է նոր, կոնկրետ ձևեր՝ լաւագույն կերպով պայքարելու արգֆինպլանների կատարման ու գերակատարման համար:

Հարվածային խմբի վարչացման մասին կարելի չէ պատկերացում ունենալ հետևյալ վոշ լրվ տվյալներից, վորոնք վերցված են միայն վորոշ ձեռնարկութիւններում կատարված հատուկ հաշվառումից և վերաբերում են 1930 թ. նոյեմբերի 1-ին:

	Չնային ներքին	Հարվ. բանվ. (հար.)	%	
			Սոցմբրցում	Հարվ. բրիգ.
Ընդամենը հաշվի չէ տոնված	547	958	57	50
Այդ թվում				
Մեհադի արդյունաբերութիւն	173	403	60	53
Տեկտիլ	173	885	51	43
Կ ա ռ ի	21	25	73	62,5
Կ ա շ ու	32	21	66	54
Քիմիական	42	58	67,5	63

Յեթե սոցմբրցակից և հարվածային բանվորների թվի այս հարաբերութիւնը տարածենք ԺՏԳԽ-ին յեթախամբողջ արդյունաբերութեան վրա, վորտեղ 1930 թ. մեջին թվով զբաղված է յեղել, 2,447 հազար բանվորութիւն, այդ դեպքում սոցմբրցման մեջ ընդգրկվածների թիվը հասնում է 1,4 միլիոնի, իսկ հարվածայինների թիվը 1,2 միլիոնի:

Հարվածայինների աճումն արդյունաբերութեան մեջ

1930 թ. նոյեմբերից մինչև 1931 թ. հունվարը հետևյալ պատկերն ունի.

Հարվածայինների տոկոսը զբաղված բանվորների ընդհանուր թվում՝

	Առ 1-ն հունվար, 1931 թ.	Առ 1-ն նոյեմբ. 1930 թ.
Վոյջ արդյունաբերութ. չէա տեղեկ.	50	
Մետաղի »	26	53
Տեկտիլի »	26	43
Կարի »	33	62,5
Կաշու »	33	54
Քիմիական »	40	63

1930 թ. 10 ամսվա ընթացքում հարվածայինների թիվն աճել է մոտավորապես 85 %-ով, մետաղագործները դեռ 104 %-ով, Մանածագործների 65 %-ով, այն դեպքում յերբ ձեռնարկը բավական ժամանակ չի աշխատել հում նյութի պակասության պատճառով: Անհրաժեշտ է ընդգծել նաև, վոր սոցմրցման պայմանագրերի ստուգման ժամանակ 1930 թ. ապրիլ ամսվա հաշվառքից հանված են և զրկված են այդ անուներից կեղծ բրվողները ու կեղծ հարվածայինները:

Անհրաժեշտ է կանգ առնել անկուսակցական լաւ-վորների մասնակցության վրա սոցմրցման ու հարվածայինության գործում հարվածայիններին տոկոսն անկուսակցական լաւվորների ընդհանուր թվում շատ բարձր է և առ 1-ը նոյեմբերին 1930 թ. կազմում է՝

Ամբողջ աղյուսակության մեջ	46,5
Մետաղ »	49
Տեքստիլ »	42
Կարի »	60
Կաշու »	48
Քիմիական »	60

16-րդ կուս. համագումարի վորոշումներից և Կ. Կ-ի սեպտեմբերի 3-ի դիմումից հետո, 5-ամյակի 3-րդ րայչիկից տարվան պատրաստվելու առթիվ սկսեց հարվածայինների արագ աճում, վորպիսին շարունակվում է մինչև այժմ: Իվանովսկայա շրջանում հոկտեմբեր ամսվա ընթացքում ավելացել են 5240 նոր հարվածայիններ, այդ թվում «Մադնիկ» գործարանում 1540, Կոլչուգինսկի գործարանում՝ 900:

Մոսկվայի շրջանում 34000 նոր հարվածայիններ, այդ թվում «Մուրճ և Մանգալ» գործարանում — 900, «Մոնումար» գործարանում — 850: Նիժեգորոդսկայա շրջանում սեպտեմբեր նոյեմբեր ամիսների ընթացքում հարվածայիններին տոկոսը 42-ից հասել է 58-ի: Ուրալյան շրջանում միայն հոկտեմբեր ամսում ավելացել են 25.000 նոր հարվածայիններ, Լիպեցինսկի գործարանում կազմակերպված է 90 նոր բրիգադ 2605 հարվածայիններով, Չուսովսկի գործարանում — 100 բրիգադ և 1160 հարվածայիններ: Լենինգրադի շրջանում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներում ավելացել են 38000 հարվածայիններ, Ուկրալինայում — 56000:

Հարվածայինների թիվն աճում է յերկաթգծում, դյուդաանտեսության մեջ և խորհրդային անտեսություններում:

ՍՈՑՄՐՑՄԱՆ ՆՈՐ ՁԵՎԵՐ

Սոցիալիստական շինարարության ոլանների կատարման պայքարում մեր առաջ խնդիր է դրվում ստեղծելու աշխատանքի նոր և ավելի բարձր ձեղեր: Կոլեկտիվ հարվածայինության նման ձեղերը դառնում են ար-

տաղրական կոլեկտիվները և կոմունաները: Այդ կոլ-
լեկտիվներն ու կոմունաներն ստեղծվեցին հենց հարվա-
ծայինների նախաձեռնությամբ, առաջին շրջանում բա-
ցակալում էր պրոֆմիությունների ղեկավարությունը:

Այդ կոմունաների ու կոլեկտիվների մասնակցու-
թյուններին ղեկավարում ու առաջնորդում էր այն դի-
տակցությունը, վոր «բանվորները աշխատում են վոչ
թե կապիտալիստների համար, այլ իրենց սեփական պե-
տության ու դասակարգի համար, այդ պետակցությու-
նը հանդիսանում է հսկայական շարժիչ ուժ արդյունա-
բերության զարգացման ու կատարելագործման խոն-
դրում»: (Ստալին)

Արտադարական կոլլեկտիվը հարվածային բրիգա-
դի ավելի կատարելագործված ձևվն է: Արտադարական
կոլեկտիվի անդամները և կոմունաները սերտորեն
կապված են միմեկյանց հետ իրենց աշխատանքով, այն-
տեղ ավելի լայն և զարգացած արտադրական փոխա-
դարձ ոգնությունը, ավելի լավ և դրված խնամատու-
ղումը, ամուր և ներքին դիսցիպլինան, մեծ է կոլեկտիվ
պատասխանատվությունը աշխատանքի հանդեպ և ա-
վելի ստորաբաժանված ու կոնկրետացված են հարվա-
ծայնության ու սոցմրցման խնդիրները:

Արտադրական կոլեկտիվների և կոմունաների աշ-
խատանքի արդյունքը հանդիսանում է վոչ միայն աշ-
խատանքի ավելի բարձր արտադրողականության, այլև
լավագույն պայքար ռադիկալացման, լավ վորակի ու
տեխնիկական գրադիստության բարձր մակարդակի հա-
մար:

Կոլեկտիվների մասնակիցները կուլտուր-քաղաքա-
կան ղգալի վերելք են ցույց տալիս գործնականում և

ձեռնարկության առաջավոր ակտիվիստներն են հանդի-
սանում:

Դժվար և պարզ սահման դեռևս արտադրական կոլ-
լեկտիվների և կոմունաների միջև:

Արտադրական կոլլեկտիվների (կոմունաների) հե-
տևյալ ստորաբաժանում կարելի չե կատարել:

1. Կոլլեկտիվներ, ուր բոլոր մասնակիցները միա-
տեսակ վորակի անձնավորություններ են, ուր աշխա-
տավարձը բաժանվում է հավասար կերպով, հաշվի առ-
նելով աշխատած ժամերը:

2. Կոլլեկտիվներ, ուր մասնակցողները դանաղան
վորակի մարդիկ են, իսկ աշխատավարձը հավասար է
բաժանվում:

3. Կոլլեկտիվներ, ուր մասնակցողները տարբեր վո-
րակի անձնավորություններ են և աշխատավարձը բա-
ժանվում է ըստ վորակի (տարբիֆային կարգով):

4. Կոլլեկտիվներ, ուր մասնակցողները տարբեր վո-
րակ ունեն ու աշխատավարձը բաժանվում է դանաղան
տարբիֆային դրույքներով, սակայն բոլորի համար հա-
վասար գերադասողանքով:

Կան նաև աշխատանքի և աշխատավարձի բաշխման
այլ ձևեր, դոյություն ունի ընտանեկան լրացում,
բայց տեղավաթիվ կոլլեկտիվներում և կոմունաներում:

1930 թ. ապրիլին պետականի կատարած հետադո-
տությունը ցույց տվեց, վոր 5294 բանվոր ընդգրկող
512 արտադրական կոլլեկտիվներում և կոմունաներում
առաջին խմբին պատկանում է հետադուրված կոլեկտիվ-
ների ու բանվորների 60 %-ը, յերկրորդին՝ կոլլեկտիվ
22 % և բանվորների 18 %-ը, յերրորդին՝ կոլլեկտիվ-
ների 8 %-ը և բանվորների 13 %-ը:

1008
35601

Փորձը ապացուցեց, Վոր դանադան վորակ ունեցող մասնագետներին հալածարեցները չառ հաճախ հոն-
ֆլիկաներ և ստեղծում, Վորը քայքայում և կոլլեկտիվը:
Ավելի կենսունակ են այն կոլլեկտիվները, Վորոնք աշ-
խատավարձը բաշխում են ըստ վորակի ու պայմաններ
են ստեղծում բարձրացնելու թե իրենց վորակը, և թե
աշխատանքի արտադրողականությունը:

ՓՈՒՍԱՂԱՐՁ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲՐԻԳԱԴՆԵՐ ՅԵՎ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲՈՒԿՍԻՐԸ

Արդֆինպլաների կատարման, արտադրության
ձեղքվածքները վերացման համար մղվող պայքարում
բանվորներն առաջնորդեցին հասարակական բուհերի և
փոխադարձ հսկողության հարվածային բրիգադի դա-
դախարը:

Փոխադարձ հսկողության հարվածային բրիգադը
առաջին անգամ ստեղծվեց Ռոստովի Եկմաշում. սակ-
նաչառապ կարգով տրակտորային և շարքայիններ բաց
թողնելու համար:

Բոլոր ցեխերի հարվածային բանվորներին ընդգրկող
այս փոխադարձ հսկողության բրիգադների աշխատան-
քը պետք և վերացներ բոլոր անսորմալությունները
շարքայինների արտադրության պրոցեսում և մի քանի
չարաթվա ընթացքում խոշոր նվաճումներ ձեռք բերվե-
ցին:

Փոխադարձ հսկողության հարվածային բրիգադներ
վերջին տարում սկսեցին մի շարք ձեռնարկներում:
Յերբ հարվածայինները ձեռնարկելով առանձին ցեխե-
րում աշխատանքի վերակառուցմանը հանդիպում եյին

անտեսական ապարատի բացերին, արտադրության
ձեղքվածքներին, վորոնք առաջ են գալիս անտեսական
որդանիվի առանձին մասերի նեխվածությունից: Շա-
հաճախ մեղքն ընկնում եր ձեռնարկության ղեկավա-
րության ու պլանավորման բացակայության վրա:

Փոխադարձ հսկողության բրիգադներն ալը դեպ-
քում իրար հետ համաձայնություն են գալիս և հիմնը-
վելով առանձին ցեխերի ու բաժինների կապի վրա՝
գրոհ են կազմակերպում արտադրության նեղ տեղերի
ու թույլ կողմերի վրա կոլլեկտիվ աշխատանքի և լար-
ված ու յեռանդի շնորհիվ ալը բրիգադները ձեռք են
բերում այնպիսի նվաճումներ, վորոնք առանձին անձ-
նավորությունների համար միանգամայն անհնարին են:

Փոխադարձ հսկողության հարվածային բրիգադի
կարևորագույն խնդիրն և — վերացնել ձեղքվածքները
և առանձին ճյուղերում դոյություն ունեցող արտա-
դրական անհարթությունները: Փոխադարձ հսկողու-
թյան բրիգադը հսկում և արտադրական պրոցեսսի բո-
լոր ետասրների վրա, ստեղծում և իր պոստը ցեխերում
և տալիս և անհրաժեշտ բանուժ վերացնելու համար
հանգիստը դժվարություններին:

Փոխադարձ հսկողության բրիգադների նշանակու-
թյունը միայն նրանում չէ, վոր նրանք պայքարում են
արտադրական առաջադրությունների կատարման հա-
մար, ալլև նրանում, վոր բանվորներին հրաչալի սովե-
րեցնում են անտեսության կառավարման գործը, հան-
դիսանում են միաժամանակ արտադրության պլանա-
վորման դալոց:

Փոխադարձ հսկողության բրիգադայի մասնակիցը իր

ստանուկից անցնում⁶ և ցեխի արտադրական պրոցեսին, հետո ամբողջ գործարանին և այդպիսով ամբողջ լայնա-
նում և բանվորի տնտեսական փորձը:

Հասարակական բուկսիրն առաջագրեցին Արտեմի անվան հանքում աշխատող բանվորները, վորոնք զերա-
կատարեցին իրենց արդիֆինպլանները և իրենց բրկադ-
ներով բուկսիրի կարգով ոգնության հասան հսկանմ-
բերյան հեղափոխության անվան հանքերի հետ մնացած
բանվորներին:

Ստեղծելով հասարակական բուկսիր՝ հաջող աշ-
խատող ձեռնարկությունների ու ցեխերի բանվորները
և տեխնիկական պերսոնալը ոգնության են հասնում
յետ մնացած և վատ աշխատող ձեռնարկություններին
ու ցեխերին:

Լավ աշխատող ձեռնարկությունները իրենց փորձի
և նվաճումների փոխանակում են կատարում, ոժանդա-
կում են վերացնելու բացերը և աշխատում են կարգի
դրել թույլ ձեռնարկություններին աշխատանքը:

Հայտնաբերելով հետամնաց ձեռնարկությունների
աշխատանքների թույլ կողմերը, ուժեղ ձեռնարկու-
թյունն առաջադրում և բուկսիրային բրիգադներ և աշ-
մինիստրացիայի ու բանվորական կազմակերպություն-
ների հետ միասին մշակում և անհրաժեշտ կազմակերպ-
չական և տեխնիկական միջոցառումներ բուկսիրի վերա-
րած ձեռնարկությանն ոգնելու համար:

Անհրաժեշտ դեպքում, բուկսիրային բրիգադը հենց
ինքն և անցնում դադարաչի մոտ, վորպեսզի լավ աշխա-
տանքի որինակ ցույց տա և դրա հետ բեկում և ստեղ-
ծում բանվորների արամադրության մեջ:

Բուկսիրային բրիգադ կազմակերպվում և վոչ մի-
այն միատեսակ ձեռնարկներում, այլ և հաճախ այն
դեպքում, յերբ տվյալ գործարաններին նյութ մատա-
կարարող գործարանն իր վատ աշխատանքով պայքա-
րում և նրանց արդիֆինպլանի կատարման ծրագիրը:

Բուկսիրն իրենից ներկայացնում և դեպի սոցմբրց-
ման բարձր աստիճանը անցնող մի շրջան, յերբ բանվո-
րը մտահոգված և վոչ միայն բարձրացնելու ձեռնար-
կության աշխատանքը, այլ և համոզությունն ձեռք բե-
րելով՝ իր փորձը տալիս և այլ ձեռնարկություններին,
չատ լավ դիտակցելով, վոր «սոցմբրցման սկզբունքը ըն-
կերական ոգնություն և առաջադեմ բնիկներին կողմից,
նպատակ ունենալով հասնելու ընդհանուր վերելքի
(Ստալին):

ՀԱՆԴԻՊԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՊԼԱՆ

«Կոմունիզմը, — ասում էր Լենինը, — սկսվում և
ախտեղ, ուր հայտնաբերում և անձնուրաց, ծանր աշ-
խատանքը հաղթահարող, չարքային բանվորի մտահո-
գությունը աշխատանքի արտադրողականության բարձ-
րացման գործում»: Այդ մտահոգությունն իր լավա-
գույն արտահայտությունը ստացավ հանդիպական
արդիֆինպլանի ստեղծման գործում ստորին բջիջներում
և այն չարժման մեջ, վորն ուղղված էր արտադրական
ուսուցանելուն ու հնարավորությունները մոբիլիզացի-
այի յենթարկելու կողմը՝ հնդամյակը չորս տարում
կատարելու համար:

Հանդիպական արդիֆինպլանների համար սկսված

չարժուժը նշանակում էր նոր քայլ, բանիւր դասակարգի կողմից՝ տիրապետելու տնտեսութեան կառավարման արվեստը, մասնակցելու նախ արտադրութեան, ապա նաև վողջ ժողանտեսութեան պլանավորման գործին:

Հանդիպական արդֆինսլանները կազմակերպումն առաջ յեկաւ արդֆինսլանները մինչև դյազդահն ու բանվորները հասցնելու աշխատանքների ու վործերի հետեանքներով:

Արդֆինսլանները մինչև դյազդահնն ու բանրի-դադները հասցնելու ժամանակ պարզվեց, արտադրական առաջադրութեանքների բարձրացման հնարավորութեանքները: Պլանավորման այդ առաջին շրջանի աշխատանքները հնարավորութեան տվեցին հարվածային բրիգադներին ընդհուպ մոտենալ արդֆինսլանների մշակման գործին:

Հանդիպողական պլանի մշակումը ձեռնարկութեանքներում շատ անգամ տեղի յե ունենում նախքան ադմինիստրացիայից արդֆինսլան ստանալը, կոնտրոլի վերի հիման վրա և նրանց քննարկման ժամանակ:

Հանդիպողական արդֆինսլանի մշակումը պահանջում է մեծ քանակութեամբ բանվորների ներգրավում: Հատուկ բրիգադներն ղեկավարում են արտադրութեան առանձին ճյուղերի ուսումնասիրութեամբ, սահմանում են արտադրական մաքսիմալ հնարավորութեանքները այս կամ այն ճյուղում, քննութեան են առնում կորուստների դեմ պայքարելու և աշխատանքի կատարելագործելու միջոցառումներ և վերջնականապես հասնում են

իրենց նպատակին, այսինքն՝ ստեղծում են այնպիսի մի դրութեան, յերբ յուրաքանչյուր դյազդահ, ցեխ և սմբողջ գործարան լրիվ ոգտագործում է իր ուժը և հնարավորութեանքները:

Առանձին ցեխերի աշխատանքները հաշվառման յեութարկելով և իրար շարկապելով, հարվածային բրիգադները մշակում են գործարանի հանդիպական ծրագրերը, միաժամանակ նշում են պլանի կատարման համար անհրաժեշտ միջոցառումները, վորոշելով տվյալներն ըստ ցեխերի, բրիգադների և անհատ բանվորների:

Հանդիպական ծրագրերը, վորը ստացված է բանվորների կողմից, ամբողջ մանրամասնութեամբ, տեխնիկապես և արտադրականապես հիմնավորված է ու ըղխում է միաժամանակ մաքսիմալ տեմպերից, նպատակ ունենալով հաղթահարել տվյալ արտադրութեան յուրաքանչյուր նեղ տեղը:

Այսպիսով հանդիպական պլանը մշակվում է արդֆինսլանների կատարման համար մղվող պայքարի ընթացքում: Հանդիպողական պլանի մասին Լեպսեյի անվան գործարանի բանվորները տալիս են հետևյալ դնահատականը, վորը կարելի յե ընդհանրացնել նաև բոլոր գործարանների նկատմամբ: Հանդիպական պլանը հնարավորութեանք է տալիս բանվորներին ծանոթանալ, նախքան տնտեսական տարվա սկիզբը, կոնտրոլի վերի հետ: Առանձին բրիգադներն այժմ գիտեն իրենց պլանն ամբողջ տարվա համար: Բանվորներն հայանաբերելով նեղ տեղերը մշակում են միջոցներ, վորով վերացնում են այդպիսին:

Հայտնաբերվում են հաշվի չառնված արտադրական միջոցները, պարզվում են արտադրական պրոցեսում, դոյուկթյուն ունեցող այն բացերը, վորոնք ձեռքավածքներ ու արգելքներ են ստեղծում:

Հարվածայիններից պլանավորման դործի ակտիվ է ստեղծվում և խթան և ստանում բանվորության բուտեղծագործական միտքը:

Համկոմկուսի (բ) Կ. Կ. 1930 թ. սեպտեմբերի դեմումով, ընդգծում է, վոր հանդիպական արդֆինպլանը ստանում է հատուկ նշանակություն, վորպես բանվորների սոցչինարարության մեջ ներգրավելու մեթոդ և հակահեղափոխության ու վնասարարության դեմ պայքարելու կարևորագույն մի միջոց:

ՎՈՐԱԿՅԱԼ ԲԱՆՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Վորակյալ բանուժի պատրաստման պրորեկտը մեր զարգացող սոցիալիստական շինարարության դործում, շատ դեպքերում և շատ ճյուղերում հանդիսանում է կարևորագույն և վճռական խնդիրներից մեկը: ՀԱՄԿ-ի հին դեկավարությունն այս խնդրին վոչ մի ուշադրություն չի դարձրել և անչափահաս բրոնխայի նվաղագույն նորմաների ապահովման խնդիրը նսեմացել է մեր արագ աճող արդյունաբերության և ժողովրդական տնտեսության այլ ճյուղերի բանուժի առաջ: Մի շարք տարիների ընթացքում Փարզործուսուսանողության թիվը մնացել է գրեթե անշարժ, այն ինչ, Փարզործուս հանդիսանում է բանուժի

պատրաստման հիմնական ձևերից մեկը (1927-28 թ. 65.5 հազար, 1928-29 թ. 67.6 հազ.):

1930 թվին Փարզործուսի նաբորը կազմել է մոտ 200 հազար, բայց և այնպես 1931 թ. Փարզործուսը կը տա 118 հազար: Սրա պատճառը նույնպես հանդիսանում է անցյալ տարիների վոչ լրիվ ընդգրկումը, մինչդեռ միմիայն արդյունաբերության դեմոլ անհրաժեշտ է պատրաստել վոչ պակաս քան 400 հազար վորակյալ բանվորներ:

Մեծ նշանակություն և ստանում ձեռնարկություններում ցածր վորակի աշխատանքից բարձր վորակի աշխատանքի առաջ քաշելու խնդիրը: Բանվորների հոստունության պատճառներից մեկը հանդիսանում է նաև այն, վոր վոչ տնտեսական մարմինները վոչ ել պրոֆմիությունները միջոցներ ձեռք չեն առնում բարձրացնելու այն բանվորների վորակը, վորոնք տարիներ շարունակ կատարում են միևնույն աշխատանքը:

Պետք է վճռականապես ոգտագործել վորակի բարձրացման մեթոդը, վորն արդյունաբերությանը կաատանյակ հագարավոր նոր վորակյալ բանուժ:

Կարևորագույն խնդիրներից մեկը պետք է համարել բանվորության տեխնիկական դրագիտության բարձրացման խնդիրը: Վերակառուցման չըջանում քաղաատիարակության դուզընթաց տեխնիկական գիտելիքները մասսայական ծավալման խնդիրը պրոֆմությունների կարևորագույն պարտականություններից մեկն է հանդիսանում: Այդ աշխատանքների մեջ պետք է ընդգրկել միլիոնավոր բանվորներին, պետք է հարվա-

ծայինին դարձնել արտադրական-տեխնիկական գիտությունների կազմակերպչին ու տարածողը:

Պրոֆիտուրյունները վերջին տարում մեծ ուշադրություն են նվիրել բանվորներից մասնագետ պատրաստելու խնդրին:

Այդ նպատակի համար, պրոֆիտուրյունները 1930 թ. ծախսել են 26 միլիոն ուրբլի: Այս ասպարիզում վճռական չըջադարձ կատարված է, սակայն, այդ մի-միայն սկիզբն է այն կարևորագույն խնդրի, վորը պրոֆիտուրյունը պետք է ծավալի ամբողջ մեծությամբ:

ՊՐՈՓԻՏԻՆԻՏՈՒՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ
ԳՈՐԾԻՆ

Պրոֆիտուրյունների հին, աջ ուղղորտունիստական դեկավարությունը միանգամայն հրաժարվում էր գյուղատնտեսության կոլեկտիվացման և գյուղում կապիտալիզմի արմատների վերացման գործում պրո-լետարական մասսաներին մոբիլիզացիայի յենթարկե-լուց:

Իրագործելով կուսակցության գլխավոր գիծը, պրոֆիտուրյան նոր դեկավարությունն իր առաջ խնդիր դրեց, չըջադարձ կատարել դեպի գյուղատնտեսու-թյան սոցիալիստական վերակառուցումը:

Պրոֆիտուրյունները խոշոր հնարավորություններ ունեն, առավելագույն չափով մատնակցելու կոլեկտիվ շարժման կազմակերպման ու զարգացման, խորհանդես-սությունների ամրապնդման ու ծավալման գործին:

1930 թ. խորհրդային տնտեսություններում կային մոտ 700 հազար բանվորներ, իսկ 1931 թ. նրանց թիվը պետք է լիներ 1.200 հազարից ավելի: Այս արդեն ա-սում են խորհրդային տնտեսությունների հսկայական աճման և զարգացման մասին: Խորհրդային տնտեսու-թյունների աշխատանքի կազմակերպման ու աջակցու-թյան խնդրին առանձնապես պետք է դրավի պրոֆիտու-թյունների ուշադրությունը, պրոֆիտուրյուններ, վո-րոնց շարքերում կան տասնյակ հազարավոր ընդունակ կազմակերպիչներ, արդյունաբերության աշխատակից-ներ:

1931 թ. հուլիսի 20-ի ամսալսերով ԽՍՀՄ-ում դյու-ղական տնտեսությունների 57 %-ն արդեն կոլտնտե-սության մեջ են: Պրոֆիտուրյուններից պահանջվում է առաջագրելու նորանոր կազմակերպիչներ:

1930 և 1931 թ. թ. պրոֆիտուրյունները կուսակ-ցության դեկավարությամբ հսկայական աշխատանք կատարեցին գործուղելով 25000 բանվոր կոլտնտեսու-թյուններ և բազմաթիվ բրիգադներ՝ գյուղի սոց-չինա-րարությանն՝ ոգնելու համար:

Գործուղումը կատարվեց կամավոր սկզբուն-քով և կամավորներից ջնկվեցին ավելի ու ավելի պի-տանի ընկերներ, վորոնք ոժանդակելու էին այնպիսի մեծ գործի, ինչպիսին է գյուղի կոլեկտիվացումը:

Ըստ ունեցած տեղեկությունների, 25-հազարական-ների 16887 հոգուց 71 %-ը կոմկուսի անդամ-թեկնա-ծուներ են, 8,2 % կոմյերիտներ և 20,2 % անկուսակ-ցականներ: Մեծագույն տոկոսը վորակյալ բանվորներ

են, վորոնց 73 % ամսական 100 ուրբուլց ավելի յեկա-
մուտ ունեն:

Դժբախտաբար պետք է ասել, վոր պրոֆմիու-
թյունների կողմից բացակայում է կապը 25-հազարա-
կանների հետ, նույնը կարելի չէ ասել նաև ձեռնարկու-
թյունների մասին:

Պրոֆմիության խնդիրը միայն այն չէ, վորպեսզի
բանվորներին զործուղի կոլտնտեսությունները, այլև
նրանց պարտականությունն է իրենց Պազմակերպչա-
կան ոգնությամբ ապահովել նոր կադրերի առաջ քա-
շումը հենց կոլտնտեսականներից:

Քաղաքի բանվորության կապի կարևորագույն
ձևը գյուղի հետ հանդիսանում է գյուղ բրիգադներ
ուղարկելը:

Բրիգադներ ուղարկում են քաղաքահուրդների ընտ-
րության, գարնանցանի ոգնության, հացամթերման
և գյուղատնտեսական ինսկետարի վերանորոգման հա-
մար:

1930 թ. պրոֆմիությունների կողմից ուղարկված
են 10400 բրիգադներ, վորից 700 վերանորոգման, և
1500 գյուղի կուլտ-սպասարկման համար: Բանվորա-
կան բրիգադներին վորոշ նպատակով մասնաշաղար
գյուղ ուղարկելը հսկայական ոգնություն է գյու-
ղին, սակայն, քիչ չեն նաև այնպիսի դեպքերը, յերբ
քաղաքից են բրիգադային աշխատանքները քրանց
թույլ պատրաստականության շնորհիվ:

Միություններն հատուկ խնդիր են դնում գյուղի
հետ կապված միության անդամների առաջ, վորպեսզի

նրանք իրենց անձնական որինակելի մասնակցությամբ
աջակցեն կոլտնտեսության աշխատանքներին:

Միութենական չեֆ աշխատանքները վերջին տա-
րում վերակառուցվեցին այլ հիմունքներով. մի շարք
միություններ կարեվորագույն հումք մշակող շրջանե-
րի չեֆությունն են վերցրել:


Որինակ՝ Մոսկվայի և Իվանովսկայա շրջանի մա-
նածաղործները վերցրել են միջին Ասիայի բամբակա-
ցան շրջանի չեֆությունը, Վենինգրադի յիպվե-գոր-
ծարանը Սիբիրի շրջանի՝ և այլն:

Կադակերպված ու նպատակային չեֆության մի-
ջոցով իրագործվում է պրոլետարիատի աղոթեցությու-
նը փոշ միայն գյուղի վրա, այլ և անմիջապես գյուղա-
տնտեսության վրա:

Այս բոլոր ոժանդակությունները պրոֆմիություննե-
րի կողմից խորհրդային ու կուլեկտիվ տնտեսություն-
ների շարժման իր ծավալված զարգացումով դեռ ևս
լրիվ չեն, յերբեմն մենք հանդիպում ենք միության դե-
րի ու անելիքի թերազնահատման այս ասպարիզում,
ուստի կուլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների
աշխատանքներին լայն ոժանդակությունը պրոֆմիու-
թյունների կողմից, հանդիսանում է իրենց կարևորա-
գույն խնդիրներից մեկը:

Խորհրդային և կոլտնտեսական շարժմանը պրոֆ-
միությունների կողմից ցույց տրվող աջակցության այս
բոլոր ձևերը դեռևս լրիվ չեն: Յերբեմն մենք հանդի-
պում ենք պրոֆմիության դերի ու անելիքի թերազնա-
հատության. այն ինչ, այդ փորձը, պրոֆմիություն-
ները պետք է համարեն իրենց կարևորագույն խնդի-
րներից մեկը:

ՀՀ Ազգային գրադարան



NL0197588

